ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՃԱՃԿՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք , հասցե փ.1 շ.1
Հեռախոս 091-38-88-38 , Էլ. Փոստ kachachkuti@mail.ru

<< 13 >> փետրվար 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն

Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքի ավագանու 02-05 որոշումները :

Առդիր՝ 14 թերթ :

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար՝ Մ. Թամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք,հասցե փ.1 շ.1
հեռախոս 091-38-88-38, էլ. Փոստ kachachkuti@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<< 07>> փետրվար 2017 թվականի N 02 - Ն

ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 -Ի << ԿԱԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԹԻՎ 19 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , և << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 -րդ հոդվածով և << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով ՝ Կաճաճկուտ համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեի փոփոխությունը :

Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեում

Եկամուտների գծով - 10156,7 հազ.դրամ

վարչական բյուջեի մասով - 10156,7 հազ.դրամ

ֆոնդային բյուջեի մասով - 0,0 հազ.դրամ

Ծախսերի գծով - 10369,9 հազ.դրամ

վարչական բյուջեի մասով - - 10369,9 հազ.դրամ

ֆոնդային բյուջեի մասով - 213,2 հազ.դրամ

2. 2017 թվականի բյուջեի եկամուտներից

Պակասեցնել՝

Հողի հարկից 140,0 հազ. ՀՀ դրամ

Գույքահարկ ավտոմեքենաների 12,7 հազ. ՀՀ դրամ

- 01 01 01 կառավարման ապարատի

42 12 էներգետիկ ծառայության ծախսեր հոդվածից 90,0 հազ. ՀՀ դրամ

42 13 կոմունալ ծառայություն հոդվածից 30,0 հազ. ՀՀ դրամ

- 10 07 01 անապահով ընտանիքներին օգնություն

47 29 այլ նպաստներ բյուջեի հոդվածից 30,0 հազ. ՀՀ դրամ

- 11 01 02 պահուստային ֆոնդի

48 91 պահուստային միջոցներ հոդվածից 132,7 հազ. ՀՀ դրամ

Ավելացնել՝

- 01 01 01 կառավարման ապարատի

42 21 ներքին գործուղումներ հոդվածին 30,0 հազ. ՀՀ դրամ

51 29 այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածին 213,245 հազ. ՀՀ դրամ

- 10 03 01 հարազատներին կորցրած անձիք

47 26 հողարկավորության նպաստ բյուջեի հոդվածին 100,0 հազ. ՀՀ դրամ

3. Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամուտների համաձայն՝հատված թիվ 1-ի:

4.Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեի հատկացումներն ըստ բրուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված թիվ 2-ի:

5.Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված թիվ 3-ի:

6.Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը՝ համաձայն հատված թիվ 4-5 ի:

7.Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2017 թ-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝համաձայն թիվ 6 հատվածի:

8.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
Արա Դավթյան			
Սարգիս Պողոսյան		—	—
Մարիետա Քառյան		—	—
Ազնիվ Օհանյան		—	—
Ստեփան Պողոսյան		—	—

Համայնքի ղեկավար՝ Մ. Թամազյան

2017 թ.փետրվար « 07 »
գ. Կաճաճկուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
ՀՀ, Լոռու մարզ, գ. Կաճաճկուտ

հեռ.091-38-88-38

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 07 >> փետրվարի 2017թվականի N 03 -Ն

ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն թիվ 1-ից թիվ 5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝(5)	Դեմ՝(0)	Ձեռնպահ՝(0)
Արա Դավթյան		—	—
Սրգիս Ղողոսյան		—	—
Մարիետա Քաոյան		—	—
Ազնիվ Օհանյան		—	—
Ստեփան Ղողոսյան		—	—

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԹԱՄԱԶՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք, գ. Կաճաճկուտ
հեռ. 091-38-88-38

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<07>> փետրվարի 2017 թվականի N 04-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Կաճաճկուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Կաճաճկուտ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 16 -Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Արա Դավթյան		–	–
Սարգիս Պողոսյան		–	–
Մարիետա Քառյան		–	–
Ազնիվ Օհանյան		–	–
Ստեփան Պողոսյան		–	–

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԹԱՄԱԶՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 07 -ի թիվ 04 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ (տաս հինգ հազար դրամ,)

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ (երեսուն հազար դրամ,)

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ (հիսուն հազար դրամ,)

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ (հիսուն հազար դրամ)

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ (հարյուր հազար դրամ)

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3000 դրամ (երեք հազար դրամ,)

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ (**հինգ հազար** դրամ.)

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ (**երեք հազար դրամ)**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ(**հինգ հազար դրամ).**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ (**հարյուր հազար դրամ)**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ **(երեսուն հազար դրամ,)**

6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 10000դրամ (տաս հազար դրամ,)

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000դրամ (քսանհինգ հազար դրամ,)

8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ (մեկ հազար հինգ հարյուր դրամ.)

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ (տասնմեկ հազար դրամ,)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000դրամ (տասնհինգ հազար դրամ,)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000դրամ (քսանմեկ հազար դրամ,)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ (երեսուն հազար դրամ,)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից 50000 դրամ (հիսուն հազար դրամ)

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ (երկու հազար դրամ.)

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ (տասնմեկ հազար դրամ,)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000դրամ (տասչորս հազար դրամ,)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000դրամ (քսանմեկ հազար դրամ,)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000դրամ (քսանվեց հազար դրամ,)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000դրամ (քառասունվեց հազար դրամ,)

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ (երեք հարյուր հիսուն դրամ)՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ (երեսուն հազար դրամ,)

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ (հիսուն հազար դրամ)

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 201000 դրամ (երկու հարյուր մեկ հազար դրամ)

դ. խաղատների համար՝ 501000 դրամ (հինգ հարյուր մեկ հազար դրամ)

ե. շահումով խաղերի համար՝ 301000 դրամ (երեք հարյուր մեկ հազար դրամ)

զ. վիճակախաղերի համար՝ 101000 դրամ (հարյուր մեկ հազար դրամ)

11) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ(**հինգ հազար դրամ).**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ (**վեց հազար** դրամ.)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ (**տաս երկու հազար դրամ,**)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000դրամ (**տաս վեց հազար դրամ,**)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21000դրամ (**քսան մեկ հազար դրամ,**)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31000դրամ (**երեսուն մեկ հազար դրամ,**)

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ (**մեկ հազար** դրամ.)

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ (**երկու հազար** դրամ.)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ (**երեք հազար** դրամ.)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ (**հինգ հազար** դրամ.)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000դրամ (**տաս հազար դրամ,**)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000դրամ (տասն վեց հազար դրամ,)

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ (մեկ հազար դրամ.)

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500 դրամ(երեք հազար հինգ հարյուր դրամ)

գ. սոցիալական գովազդի համար՝0դրամ (զրո դրամ)

դ. այլ արտաքին գովազդի համար՝1500 դրամ (հազար հինգ հարյուր դրամ)

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ (հիսուն հազար դրամ)

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ (տաս հազար դրամ,)

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ (երկու հարյուր հիսուն հազար դրամ)

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750000 դրամ (յոթ հարյուր հիսուն հազար դրամ)

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝1500000 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2100000 դրամ (երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ)

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝3000000 դրամ (երեք միլիոն դրամ)

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ (մեկ հազար դրամ.)

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ (մեկ հազար դրամ.)

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 դրամ (մեկ հազար դրամ.)

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 դրամ (մեկ հազար դրամ.)

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 դրամ (մեկ հազար դրամ.)

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 դրամ (մեկ հազար դրամ.)

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ ֆասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 25 դրամ (**քսան հինգ** դրամ.)

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ (**մեկ հազար** դրամ.)

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետր համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ 200 դրամ (**երկու հարյուր դրամ)**

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 50 դրամ(**հիսուն դրամ)** փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
ՀՀ, Լոռու մարզ, գ.Կաճաճկուտ

հեռ.091-38-88-38

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 07 >> փետրվարի 2017թվականի N 05 -Ն

ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹԹ.. ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝
համայնքի ավագանին որոշում է .

1 . Հաստատել Կաճաճկուտ համայնքի 2013- 2016 թթ.. քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝(5)	Դեմ՝(0)	Ձեռնպահ՝(0)
Արա Դավթյան		-	-
Սարգիս Պողոսյան		-	-
Մարիետա Քառյան		-	-
Ազնիվ Օհանյան		-	-
Ստեփան Պողոսյան		-	-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԹԱՄԱՋՅԱՆ

Կ.Տ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Կաճաճկուտ գյուղական համայնքի ավագանու

2017 թվականի փետրվարի 07 –ի թիվ 05 -Ն

2013-2016թթ.. Կաճաճկուտ համայնքի զարգացման քառամյա ծրագրից իրականացվել է 001 կոդի << Համայնքն Ալավերդի քաղաքին կապող ճանապարհի համայնքից մինչև Աքորի հատվածի խճապատում >> կետը 2016 թվականի ընթացքում :

Ճանապարհի խճապատումից օգտվում են ոչ միայն Կաճաճկուտ համայնքի ամբողջ բնակչությունը , այլ նաև հարևան Աքորի համայնքի բնակչության մոտավոր 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԹԱՄԱԶՅԱՆ